



**Holy Martyrs Ferrahian High School**  
 Սրբոց Նահատակաց Ֆերահեան  
 Երկրորդական Վարժարան

**Holy Martyrs Marie Cabayan Elementary School**  
 Սրբոց Նահատակաց Գապայեան  
 Նախակրթարան

Միրելի ապագայի ընտանիքներ,

Մեր դպրոցի նկատմամբ ցուցաբերած ձեր հետաքրքրության համար, շնորհակալություն կը յայտնեն: Ազգային Ֆերահեան երկրորդական վարժարանը, կը հայթաթէ Գոլէճի նախապատրաստական ապահով միջավայր մը, որը կ'ընծայէ ակադեմական, արտադպրոցական, մարզական եւ ընկերային բացառիկ հնարաւորութիւններ:

Անցնող 53 տարիներու ընթացքին, մեր վարժարանը հայ երիտասարդներուն դաստիարակած է. հազարաւոր շրջանաւարտներ Ֆերահեանի պատմութեան մէջ արձանագրած են բարձր յաջողութիւններ: Մենք նուիրուած ենք աշակերտներու դաստիարակութեան գործին այնպիսի միջավայրի մը մէջ, ուր զօրաւոր շեշտը դրուած է ոչ թէ միայն ակադեմական ամուր հիմքեր հաստատելու, այլեւ ուսանողներուն օգնելու որպէսզի անոնք դառնան համայնքին սիւները:

Կը խոստանանք գործակցելու ձեր հետ օգնելով ձեր երեխային դառնալու այն աշակերտը, ով պիտի հպարտանայ իր հայկական ինքնութեամբ, մշակոյթով եւ քրիստոնէական հաւատքով եւ սպառազինուած պիտի ըլլայ այնպիսի գիտելիքնով, որը ապագային պիտի օգնէ յաջողելու թէ ակադեմական գետնի վրայ եւ թէ վարժարանէն դուրս: Բացի այդ, կ'առաջարկենք խստապահանջ եւ հարուստ ուսումնական ծրագիր, որ կը ներառէ երկրորդականի բազմաթիւ դասընթացքներ, արուեստի, համակարգիչի կրթութեան, երաժշտական ձայնաւորի, ֆիզիքական դաստիարակութեան եւ ուսումնական միջոցառումներու, ինչպիսին են՝ ՄԱԿ-ի օրինական արտադպրոցական ծրագիր, գիտական եւ պատմութեան ցուցահանդէսներ, աստենախօսութիւն եւ ճարտարախօսութեան մրցոյթներ: Աշակերտները հնարաւորութիւն ունին նաեւ մասնակցելու տարբեր ակումբներու մէջ:

Մեր վարժարանի բարձրագոյն որակաւորումով ուսուցչական կազմն ու պաշտօնէութիւնը, նուիրուած են աշակերտներուն ընծայելու հարուստ հնարաւորութիւններ, դասարանէն ներս թէ դուրս: Կը խրախուսենք եւ կը հրաւիրենք աշակերտներն ու ծնողքները համագործակցելու մեր հետ, ակադեմական, մարզական եւ արտադպրոցական մեր ծրագիրներուն մասնակցելու հնարաւորութիւններ ձեռք բերելու համար:

Կրկին, կը ողջունենք Ֆերահեանի ընտանիքին եւ զբանջելի ուսանողական համայնքին, այնպիսի վայրի մը մէջ ուր կայ կորով, ոգեւորութիւն եւ գերազանցութեան բարձր չափանիշ: Մեր ակնկալութիւնն է որ միասին աշխատելով, մեր դպրոցը դարձնենք «Լաւագոյն վայրը գտնուելու»:

Մնամ Միշտ Յարգանօք՝

Սօսի Շանլեան  
 Երկրորդականի Տնօրէնուհի